

կը նշմարուին զծագարդեր բայց հազիւ տեսանելի : Կոթը մերկացած է իրեն յարմար եւ վայելուչ զարդերէն կամ քարերէն : »

Այս սրին վրայ գրուած « 1366 » թուականը միայն կը բաւէ հաստատելու թէ կեզծ է ան . վասն զի Լեւոն Ե թագաւորած է 1374-ին միայն , իսկ Լեւոն Դ՝ 1320—1342-ին : Ուրեմն նոյն թուականին Լեւոն անունով թագաւոր չենք ունեցած , այլ Կոստանդին Դ , որուն իշխանութիւնը տեւած է 1365—1373 :

Թիֆլիսի Կեղրոնական Գրավաճառանոցի հին մէկ Յուցակին մէջ ալ կը կարդամ զոյոթիւնը կէս տպագրական թերթէ բազկացած տետրակի մը , սպուած ի Թիֆլիս 1873 թուին , հետեւեալ խորագրով . « Սուր Լեւոնի Զ-ի , թագաւորի Հայոց » : Ասիկա չեմ տեսած . հետեւաւար չեմ կրնար կարծիք յայտնել այս մասին :

Գալով Լեւոնի իսկական սրին , անիկա Եղիպտոս տարուած պիտի ըլլայ , իբրեւ թանկագին նուէր մատուցուելու համար սուլտանին . բայց անոր հետքն առ այժմ կորսուած է . թերեւս օր մը թանգարանի մը անկիւնէն գտնուի , եւ հրապարակ հանուի : Մի եւ նոյնը կրնամ ըսել նաեւ Լեւոնի թագին համար , թէ եւ իր յուզարկաւորութեան նկարագրութեան մէջ (եր. 127) տեսա՛ք թէ « գլխուն քով դրուած է իր օսկեղէն թագը : » Այս նկարագրութիւնը ճիշտ է . միայն պէտք է գիտնալ , որ Լեւոն Թրաւնապի՛ մեջ շինել տուած է զայն , ինչպէս շինել տուած է նաեւ թագաւորական կնիք մը , զոր պիտի տեսնենք վարը . — Հաւանական է որ ուրիշ սուր մըն ալ շինել տուած ըլլայ Եւրոպա անցնելէ ետք . բայց այս մասին յիշատակութիւն մը չեմ գտած տեղ մը :



## ԻԵ

### Լեւոնի դրամներ



եմ գիտեր թէ Լեւոն իր կարծ եւ տագնապալից իշխանութեան միջոցին ժամանակ ունեցա՞ւ զրամ տպելու , թէ եւ մեր մեծանուն դրամագէտն՝ օղբացեալ հ. Կզեմէս վ. Սիպիլեան իր Գաւառորութիւն Ռուբենեան դրամոց խորագիր երկասիրութեան մէջ մի առ մի նկարագրած է վերջին Լեւոնի անունով զանազան դրամներ , որոնց տեսակները